

<<ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ>>-ՀԿ



ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Աշակերտի ինքնուրույն գործունեության
կազմակերպման ձևերը»

Ուսուցիչ՝ Մարինե Գյուլչանյան

Ղեկավար՝ Վերոնիկա Բաբաջանյան

Երևան 2023

Բովանդակություն

1. Ներածություն-----	3
2. ԳԼՈՒԽ 1	
Ինքնուրույն գործունեության կարևորությունը-----	4
3. ԳԼՈՒԽ 2	
Ինքնուրույն գործունեության ձևավորումը-----	5
4. ԳԼՈՒԽ 3	
Ինքնուրույն գործունեության կազմակերպումը և ձևերը-----	7
5. ԳԼՈՒԽ 4	
Ինքնուրույն գործունեության կազմակերպումը մաթեմատիկայի դասերին-----	11
6. Եզրակացություն-----	13
7. Գրականություն-----	15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշակերտի ինքնուրույն գործունեությունը համարում են միակ կայուն հիմքը ցանկացած ուսուցման համար, իսկ ինքնուրույնությունը՝ գլխավոր պայմանը, որի առկայության դեպքում ուսուցումը դառնում է դաստիարակության միջոց:

Կ.Դ. Ուշինսկի

Ինքնուրույնության ձևավորման նախապայմանը ազատությունն է: Որպեսզի աշակերտն ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալի, նրան անհրաժեշտ է այդ հնարավորությունը տալ: Ինքնուրույնության գաղափարի համատեքստում ուսուցչի համար կարևոր խնդիր է դառնում ուսուցման գործընթացն աստիճանաբար ինքնուսուցման գործընթացի վերածելը: Ինքնուսուցման պարագայում սովորողն ինքն է կազմակերպում, կարգավորում և հսկում իր իմացական գործունեությունը: Ինքնուրույն ուսումնական աշխատանքները լավագույնս կարելի է իրականացնել ուսուցման գործընթացը՝ մասնակիորեն հետազոտական գործընթացի վերածելով:

Հետազոտության արդիականությունը: Այժմ բոլոր ոլորտներում զարգացման տեմպերն արագանում են, այդ թվում նաև նկատվում է զարգացում կրթական համակարգում: Եվ անհրաժեշտ է աշակերտներին տալ հիմնարար գիտելիքներ և սովորեցնել ինքնուրույնություն:

Այս համընդհանուր զարգացման աշխարհում առանձնահատուկ կարողություն է մարդու ինքնուրույնությունը, այն անձնային որակ է:

Հեղափոխության նպատակը: Ինքնուրույնությունը սեփական կյանքը

կազմակերպելու, սեփական հոգևոր ու մտավոր հնարավորությունները գիտակցելու, գնահատելու և ըստ այդմ իր զարգացման ուղին ընտրելու մարդու ընդունակությունն է:

Հեղափոխության խնդիրները: Ժամանակակից դպրոցին ներկայացվող հիմնական պահանջն է այնպիսի անձնավորության ձևավորումը, ով կարողանում է ինքնուրույն, ստեղծագործաբար լուծել գիտական, գործնական, հասարակական խնդիրներ, կարողանում է մտածել, մշակել և պաշտպանել սեփական տեսակետները, համոզմունքները, ինքնակրթության միջոցով կատարելագործել կարողունակությունները, հմտությունները և ստեղծագործաբար կիրառել դրանք կյանքում:

ԳԼՈՒԽ 1

ԻՆՔՆՈՒՐՈՅՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից դպրոցին ներկայացվող հիմնական պահանջն է այնպիսի անձնավորության ձևավորումը, ով կարողանում է ինքնուրույն, ստեղծագործաբար լուծել գիտական, գործնական, հասարակական խնդիրներ, կարողանում է մտածել, մշակել և պաշտպանել սեփական տեսակետները, համոզմունքները, ինքնակրթության միջոցով կատարելագործել կարողունակությունները, հմտությունները և ստեղծագործաբար կիրառել դրանք կյանքում:

Գոյություն ունեն տարբեր մանկավարժական ուղղություններ, որոնք կարևորել են ուսուցման գործընթացում սովորողների ակտիվության և ինքնուրույնության

դաստիարակությունը: Առաջին ուղղությունը գալիս է դեռևս հին ժամանակներից: Այդ ուղղության ներկայացուցիչներն էին հին հույն գիտնականները՝ Սոկրատեսը, Պլատոնը, Արիստոտելը: Նրանք խորապես հիմնավորել են աշակերտների ինքնուրույն գործունեության կարևորությունը: Վերջիններս գտնում էին, որ մարդու մտածողության զարգացումը հաջողությամբ կարող է ընթանալ միայն ինքնուրույն գործունեության ընթացքում:

Այժմ բոլոր ոլորտներում զարգացման տեմպերն արագանում են, այդ թվում նաև նկատվում է զարգացում կրթական համակարգում: Եվ անհրաժեշտ է աշակերտներին տալ հիմնարար գիտելիքներ և սովորեցնել ինքնուրույնություն:

Այս համընդհանուր զարգացման աշխարհում առանձնահատուկ կարողություն է մարդու ինքնուրույնությունը, այն անձնային որակ է:

Ինքնուրույնությունը սեփական կյանքը կազմակերպելու, սեփական հոգևոր ու մտավոր հնարավորությունները գիտակցելու, գնահատելու և ըստ այդմ իր զարգացման ուղին ընտրելու մարդու ընդունակությունն է:

ՔԼՈՒԽ 2

ԻՆՔՆՈՐՈՒՅՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Երեխայի ինքնություն գործունեությունը ձևավորվում է դեռևս վաղ մանկության շրջանում: Ուսուցման գործընթացում, կրտսեր դպրոցական տարիքից սկսած, սովորողներին անհրաժեշտ է սովորեցնել աշխատել ինքնություն: Երեխայի ինքնությունությունը զարգանում է աստիճանաբար, դրսևորվում դասից դաս, դասարանից դասարան: Ինքնություն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց, այն նպաստում է ինքնությունության ձևավորմանը: Եթե երեխաները, դեռևս փոքր տարիքում, սովորում են ինքնություն աշխատել, ապա այդ կարողությունը դառնում է նրանց սեփականությունն ամբողջ կյանքի ընթացքում:

Խոսելով աշակերտների մոտ ինքնությունության ձևավորման մասին՝ անհրաժեշտ է նկատի ունենալ երկու իրար հետ սերտ կապված խնդիրներ: Դրանցից առաջինը կայանում է նրանում, որ աշակերտների մոտ պետք է զարգացնել ինքնությունություն ճանաչողական գործունեության մեջ, սովորեցնել աշակերտներին ինքնություն տիրապետել գիտելիքներին, ձևավորել սեփական աշխարհայացքը: Երկրորդ խնդիրը կայանում է նրանում, որ պետք է սովորեցնել երեխաներին ինքնություն կիրառել յուրացրած գիտելիքները ուսման և պրակտիկ գործունեության ընթացքում:

Ինքնություն գործունեությունը ինքնանպատակ չէ. այն աշակերտների ստացած գիտելիքների հիմնավոր և խորը յուրացման համար պայքարի ինքնությունության՝ որպես անձնային որակների ձևավորման հզոր միջոց է հանդիսանում:

Առաջին անգամ մտնելով դպրոց աշակերտը դեռևս չի կարող ինքնություն նպատակ դնել, ի վիճակի չէ նույնիսկ ինքնություն պլանավորել սեփական գործողությունները: Աշակերտը ուսումնառության ընթացքում պետք է հասնի ինքնությունության բավականին բարձր մակարդակի, որը հետո հնարավորություն է ստեղծում հաղթահարելու տարբեր խնդիրներ:

Ինքնությունության դաստիարակության անհրաժեշտությունը անվիճելի է, քանի որ գիտելիքները, կարողությունները և հմտությունները չի կարելի փոխանցել ուսուցչից աշակերտին՝ օգտագործելով միայն ուսուցչի արտաբերված բառերը: Այս գործընթացն

իր մեջ ներառում է ծանոթություն, ընկալում, ինքնուրույն վերամշակում, գիտակցում և այն կարողությունների ու հմտությունների ընդունում:

Իհարկե, ինքնուրույն գործունեության արդյունավետությունը հանդիսանում է բարձր հոգևոր, մտավոր արժեքային համակարգին տիրապետող անձի ձևավորումից:

ԳԼՈՒԽ 3

ԻՆՔՆՈՒՐՈՅՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՁԵՎԵՐԸ

Տարրական դասարաններում աշակերտի ինքնուրույն աշխատանքը բավականին մեծ դեր ու նշանակություն ունի:

Տարրական դասարաններում աշակերտի ինքնուրույն աշխատանքի անցկացումն ունի որոշակի առանձնահատկություններ:

Մերօրյա մանկավարժի գործունեությունը չպետք է սահմանափակի սովորողի ստեղծագործական որոնումների շրջանակը: Ընդհակառակը, ուսուցման գործընթացն աշակերտին պետք է ինքնադրսևորման և ինքնազարգացման հնարավորություն ընձեռի: Դա իրականացվում է սովորողների կողմից նորը փորձարկելու, բացահայտումների, ուսումնառության ընթացքում ինքնուրույն գործունեություն ծավալելու միջոցով: Ուսուցիչը, ուղղորդելով, աջակցելով, սատարելով հանդերձ, պետք է աշակերտին՝ ասես աննկատ ու անձայն հուշի. «Փորձի՛ր, ինքնուրույն հարթել արդյունքի հասնելու քո ճանապարհը»: Մինչդեռ հանրակրթական ուսումնական հաստատություններում կատարվող ուսումնասիրությունները ցուցահանում են այլ պատկեր, ուր առկա է սովորողների ինքնուրույն գործունեություն ծավալելու կամ իրենց գործունեությունն ինքնուրույն կարգավորելու կարողությունների պակասուրդ: Գոյություն ունեն բազմաթիվ մանկավարժական մեթոդներ և ուսումնական գործունեության կազմակերպման եղանակներ, որոնք միտված են այդ խնդրի լուծմանը: Հիմնականում դասի «տերը» ուսուցիչն է: Ինքնուրույն գործունեության կազմակերպումն ու անցկացումը պահանջում է հստակ մոտեցում: Այդ պատճառով անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի պլանը, որոշել ինքնուրույն աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը, դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները:

Կան տարբերակված մոտեցման հետևյալ ձևերն ու մեթոդները՝

- Զույգերով աշխատանք, երբ սովորողները աշխատում են զույգ-զույգ:
- Ֆրոնտալ, երբ բոլոր սովորողները կատարում են միևնույն աշխատանքը:
- Խմբային, երբ տարբեր խմբեր աշխատում են տարբեր առաջադրանքների վրա:

- Անհատական, երբ յուրաքանչյուրն աշխատում է հատուկ առաջադրանքների վրա: Ճիշտ կազմակերպված ինքնուրույն աշխատանքը պարբերաբար անցկացնելով՝ աշակերտներն առավել խորը և ճկուն գիտելիքներ են ձեռք բերում, քան ուսուցչի կողմից

պատրաստի գիտելիքների հաղորդման դեպքում:

Հայտնի է, որ սովորողների ինքնուրույն աշխատանքը կազմակերպելու լավագույն միջոցներից է տեղեկատվական աղբյուրներից օգտվելու կարողության ձևավորումը: Չափորոշչային ու ծրագրային այս պահանջը ուսումնական գործընթացում ևս խիստ կարևոր է: Սովորողը պետք է կարողանա տեղեկատվական «ծովից» դուրս բերել իր համար անհրաժեշտ տեղեկությունը, կողմնորոշվել այդ նյութի սահմաններում և ինքնուրույն ուսումնասիրել այն: Միանշանակ, աշակերտի համար այս աշխատանքը պետք է լինի հաղթահարելի:

Ինքնուրույն գործունեությունը կազմակերպվում է այնպես, որ այն աշակերտների մոտ ունակություններ և սովորույթ առաջացնի աշխատանքի նկատմամբ:

Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, սովորողների ինքնուրույն աշխատանքն ունի որոշակի կառուցվածք: Այն իր մեջ ներառում է վեց հիմնական փուլեր:

1. Կազմակերպչական փուլ: Սա աշակերտների աշխատանքային միջավայրի նախապատրաստումն է:
2. Նախապատրաստական փուլ: Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է կամ մեկ անգամ ևս հիշեցնում է աշակերտներին հանգիստ նստել, չխանգարել մյուս աշակերտներին, պահպանել լռություն և կարգուկանոն, ուշադիր աշխատել, ինքնաստուգում կատարել և այլն, այսինքն՝ այն ամենը, ինչը կապահովի աշխատանքի արդյունավետությունը:
3. Կողմնորոշիչ փուլ: Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է առաջադրանքի բովանդակությունը: Նա ստանալով առաջադրանք՝ ընթերցում կամ վերընթերցում է պայմանը, դիտարկում է առարկան կամ գծագիրը, ընթերցում է տեքստը և այլն: Այս փուլի ընթացքում սովորողը իմաստավորում է առաջադրանքը, առանձնացնում է՝ ինչ է տրված, ինչ պետք է իմանալ կամ

կատարել, ինչպիսի գիտելիքներ և գործողություններ են պահանջում աշխատանքի կատարման համար: Աշակերտները ծանոթանում են հուշաթերթիկի բովանդակությանը: Բացի դրանից, այս փուլում ուսուցիչը կարող է բաշխել աշխատանքի պլանը: Պլանը կարելի է նաև գրառել գրատախտակին: Գրատախտակին փակցվում են նաև թեմայի շուրջ մշակված պաստառներ, սխեմաներ և այլն: Այս փուլում ձևավորվում է ուսումնական աշխատանք ծավալելու կարևորագույն կարողություններից մեկը՝ աշխատանքի համար կարևոր նյութերի ընտրելու կարողությունը:

4. Հիմնական փուլ: Այս փուլում կատարվում է ինքնուրույն աշխատանք:
5. Ամփոփիչ փուլ: Այս փուլում կատարվում է անցուդարձ: Ուսուցիչը գնահատում է, քննարկում է, վերլուծում ամբողջ դասարանի աշխատանքի ընթացքը, արդյունքները:
6. Ստուգիչ փուլ: Այս փուլի ընթացքում աշակերտը կատարելով առաջադրանքը, ինքն իր սեփական նախաձեռնությամբ ստուգում է իր աշխատանքը և գնահատում այն, այսինքն՝ իրականացնում է ինքնաստուգում և ինքնավերահսկում:

Ուսուցման ընթացքում կիրառվում են ինքնուրույն գործունեության զանազան ձևեր, որոնց օգնությամբ աշակերտները ինքնուրույն ձեռք են բերում գիտելիքներ, կարողություններ և հմտություններ:

Ինքնուրույն գործունեության մակարդակներից կախված՝ կարելի է ընդգծել ինքնուրույն աշխատանքի չորս տեսակ:

- Ընդօրինակման
- Վերարտադրողական
- Էվրիստիկ
- Ստեղծագործական

Բնականաբար այս չորս ձևերից յուրաքանչյուրը ունի իր դիդակտիկ նպատակը:

1. Օրինակից ընդօրինակման ինքնուրույն գործունեությունը անհրաժեշտ է աշակերտների մոտ ունակությունների և կարողությունների ձևավորման և դրանց ամրապնդման համար: Այս տիպի աշխատանքների դերը անչափ

կարևոր է, քանի որ հանդիսանում են իրական ինքնուրույն գործունեության հիմքը: Ուսուցչի դերը կայանում է նրանում, որ կարողանա որոշել յուրաքանչյուր երեխայի աշխատանքի օպտիմալ չափը:

Ինքնուրույն գործունեության մնացածը ձևերի արագ անցումը զրկում է աշակերտներին անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների հիմքից: Իսկ երկարատև կանգնելը հանդիսանում է ժամանակի անիմաստ կորուստ, որը բերում է անգործության և ձանձրույթի: Աշակերտի մոտ կորչում է հետաքրքրությունը ուսման և առարկայի նկատմամբ:

2. Ինքնուրույն աշխատանքը վերակառուցողական տիպի մեջ թույլ է տալիս

նախկինում ձեռք բերված գիտելիքների և ուսուցչի կողմից տրված ընդհանուր մտքերի հիման վրա գտնել խնդիրների լուծման ընդհանուր եղանակներ: Այս տիպի ինքնուրույն աշխատանքները բերում են նրան, որ աշակերտները մտածված, իրենց գիտելիքները օգտագործում են տիպային իրադրություններում, սովորում են վերլուծել երևույթները, փաստերը:

3. Էվրիստիկ կամ մասնակի որոնողական աշխատանքները ձևավորվում են անհրաժեշտ կարողություններ և հմտություններ՝ փնտրելու պատասխաններ արդեն իսկ ծանոթ օրինակների սահմաններից դուրս: Որպես կանոն աշակերտը ինքն է որոշում խնդիրների լուծման ճանապարհները և գտնում դրանք: Խնդիրների լուծման համար գիտելիքներ նա արդեն ունի, բայց դրանք սեփական հիշողության մեջ փնտրելն այնքան էլ հեշտ չէ: Այդպես էլ ձևավորվում է սովորողի ստեղծագործական անհատականությունը: Նոր լուծումների անընդհատ փնտրտունքը, ստացված գիտելիքների ընդհանրացումը և համակարգումը աշակերտների գիտելիքները դարձնում են ավելի ճկուն, մշակում են կարողություններ և հմտություններ:

4. Ստեղծագործական ինքնուրույն աշխատանքները հանդիսանում են աշակերտների ինքնուրույն աշխատանքների համակարգի պսակը: Այս գործունեությունը թույլ է տալիս սովորողներին իրենց համար սկզբունքորեն նոր գիտելիքներ: Ուսման պրակտիկայում ինքնուրույն գործունեության ցանկացած տիպ ներկայացված է տարբեր աշխատանքների տեսքով: Դրանցից առավել տարածվածներն են՝

- աշխատանք գրքի հետ
- վարժություններ
- թեմատիկ աշխատանքները, թելադրություններ, շարադրություններ
- զեկուցումներ, ռեֆերատներ
- լաբորատոր փորձեր, հետազոտություններ

ԳԼՈՒԽ 4

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԴԱՍԵՐԻՆ

Ինքնուրույն գործունեություն ծավալելու, հմտություն ձևավորելու համար կարևոր է նաև դասագրքով տարվող աշխատանքի ճիշտ կազմակերպումը: Նշենք, որ մաթեմատիկայի գործող դասագրքերը պարունակում են սովորողների ճանաչողական կարողությունները խթանելու և ինքնուրույն գործունեությունն ակտիվացնելու առաջադրանքներ: Ներկայացվում է նաև կողմնորոշիչ նշաններ կամ պատկերազարդ նյութեր՝ նկար, պատկեր: Սրանք դասագրքի առավելություններն են, և ուսուցիչը պետք է դրանք օգտագործի աշակերտին ինքնուրույն աշխատանքի մղելու նպատակով: Հենվելով տվյալ թեմայի վերաբերյալ նախնական գիտելիքի վրա, աշակերտը կարող է ինքնուրույն ուսումնասիրել նոր նյութը: Օրինակ՝ եթե աշակերտներտը գիտեն երկնիշ թվերի սյունակաձև գումարումն առանց կարգային անցումի, ապա նրանցից ոչ բոլորի համար դժվարություն կներկայացնի դրանք կարգային անցումով սյունակաձև գումարելը, հատկապես, եթե ուսուցիչը կազմակերպի նպատակային նախապատրաստական աշխատանքներ՝ կրկնելով երկնիշ թվերը կարգային գումարելիների գումարի տեսքով ներկայացնելը, միանիշ թվերի կարգային անցումով

գումարման դեպքերը ($25=20+5$, $6+7=13$, 17 թվի մեջ կա 1 տասնյակ և 7 միավոր և այլն): Նշենք, որ խոսքը վերաբերում է միայն այն աշակերտների, ովքեր կարող են առանց ուսուցչի ուղղորդմամբ հասկանալ նոր նյութը: Մյուսներին բացատրում է ուսուցիչը:

Հատուկ ուշադրության են արժանի անմիջականորեն տեքստային խնդիրներին առնչվող նյութերը: Նոր տեսակի խնդիրների հետ ծանոթացումը որպես կանոն, կատարվում է ուսուցչի ղեկավարությամբ: Տեքստային խնդիրների հետ կապված աշխատանքներում հարկավոր է ուշադրություն դարձնել նաև սովորողների դիտարկելու, դասակարգելու, համակարգելու համեմատելու, հակադրելու կռահելու եզրակացնելու կարողությունների դրսևորումներին: Օրինակ՝ կարելի է հանձնարարել 1 կամ 2 հարցով խնդիրներ, որոնք ունեն նույն տվյալները և նման հարցեր:

1. Տուփում կա 6 մեկտողանի տետր, իսկ վանդակավոր՝ 2-ով պակաս: Քանի՞ վանդակավոր տետր կա տուփում:
2. Տուփում կա 6 մեկտողանի տետր, իսկ վանդակավոր՝ 2-ով քիչ: Ընդամենը քանի՞ տետր կա տուփում:

Համեմատումը աշակերտներին օգնում է գիտակցելու, թե որն էր իր համար նորը, և որի՞ մասին ինքն արդեն գիտեր:

Ուսումնասիրվող նյութի ըմբռնումն ստուգելու համար ուսուցիչը պետք է խնամքով մշակի ուսումնական նյութի հիմնական, հանգուցային պահերը ներառող հարցեր, ինչպես նաև աշակերտների մասնակցությամբ կազմի իրականացվող գործողությունների քայլաշար: Աշակերտները պետք է սովորեն կարդալ և հասկանալ խնդրում նկարագրվող իրավիճակը վերլուծելով տեքստը: Տեքստի շուրջ կատարվող աշխատանքի ժամանակ աշակերտը պետք է կարդացածից վեր հանի հիմնական հասկացությունները և փաստերը, տարանջատի գլխավորը երկրորդականից, գտնի կապերն ու կապվածությունը տվյալների և որոնելիի միջև: Տեքստի շուրջ տարվող աշխատանքի ժամանակ ուսուցիչը պետք է աշակերտին կողմնորոշի խնդրի բովանդակությունը բացահայտել ոչ թե բառացիորեն, այլ մաթեմատիկական մոդելների միջոցով: Սա բավականին արդյունավետ մեթոդ է:

Աստիճանաբար պատկերազարդումներին կարող են փոխարինել խնդրի համառոտ գրառումները, ամրագրվում են հենակետային տվյալներն ու որոնելին, ինչպես նաև որոշ բառեր, որոնք ցույց են տալիս խնդրի պայմանում տրված կապերը մեծությունների միջև և կողմնորոշում խնդրի լուծման հարցում: Նմանատիպ աշխատանքների ներկայացումը իհարկե, ուղղեկցվում է խնդրի բովանդակությունից բխող հատուկ հարցադրումներով. «Ի՞նչն է հայտնի խնդրի պայմանում», «Ի՞նչը պետք է գտնել», «Կարո՞ղ ենք միանգամից պատասխանել խնդրի հարցին» և այլն:

Խանութ բերեցին 5 պարկ բրինձ, յուրաքանչյուր պարկում՝ 40 կգ, և 7 պարկ ցորեն՝ յուրաքանչյուրում՝ 35 կգ: Ընդամենը քանի՞ կիլոգրամ բրինձ և ցորեն բերեցին:

Տեքստի վերլուծության արդյունքում պարզ է դառնում՝ ի՞նչն է հայտնի, ի՞նչն է անհայտ: Այնուհետև կատարվում է խնդրի համառոտ գրառումը:

Բրինձ - 5պարկ, յուրաք. - 40կգ } ?կգ
Ցորեն - 7պարկ, յուրաք. - 37կգ }

Այս ամենից հետո աշակերտների համար առավել դյուրին է դառնում խնդրի տվյալների ուղղությամբ ինքնուրույն աշխատանքը:

Բնական է, որ երեխաները տարբեր են իրենց ընդունակություններով: Ուստի անհատական կարողությունների և պատրաստվածության մակարդակների նկատմամբ հարկավոր է կիրառել շերվատավոր ուսուցում՝ միաժամանակ զարգացնելով նրանց՝ ինքնուրույն աշխատելու կարողությունը: Ուժեղ աշակերտներին կարելի է առաջարկել առաջադրանքներ՝ լուծել խնդիր, կազմել այդ խնդրի հակադարձը և այլն: Մյուս աշակերտների համար այսպիսի առաջադրանքները կարող են ուժերից վեր լինել, ուստի նպատակահարմար է նրանց տրամադրել օգնող դետալներ՝ քարտեր, նկարներ, գծակարգեր, լրացուցիչ բառային ցուցումներ և այլն:

Կիրառելով աշակերտների ինքնուրույն գործունեությունը կազմակերպելու զանազան մեթոդներ և հնարներ՝ չպետք է մոռանալ, որ աշակերտին հարկավոր է նախապատրաստել համապատասխան գործունեության կատարմանը: Հակառակ դեպքում նրա աշխատանքում արդյունավետություն արձանագրել հնարավոր չէ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- Ինքնուրույն աշխատանքի շնորհիվ նորը ճանաչելու ցանկություն է առաջանում: Իսկ այդ ցանկությունը նպաստում է այն կարողությունների զարգացմանը, որոնք պարտադիր են ինքնակրթության և ինքնակատարելագործման համար:
- Ճիշտ է պարբերաբար աշխատանքի արդյունքում սովորողները առավել խորը և ճկուն գիտելիքներ են ձեռք բերում, քան այն դեպքում, երբ ուսուցիչն ինքն է մշտապես պատրաստի գիտելիքներ մատուցում:
- Հենց ինքնուրույն գործունեության մեջ է արտահայտվում աշակերտի նպատակասլացությունը, ինքնուրույնությունը, ինքնակազմակերպումը և այլ անձնային որակները:
- Հմուտ մանկավարժների դասերին աշակերտները դասի մեծամասնության ժամանակ կատարում են տարբեր ինքնուրույն աշխատանքներ:
- Ինքնուրույն գործունեությունը ուսուցման այնպիսի միջոց է, որի շնորհիվ սովորողների մոտ ձևավորվում է հոգեբանական մտածելակերպ ինքնուրույնաբար և սիստեմատիկորեն համալրելու իրենց գիտելիքները:
- Սովորողների ինքնուրույն գործունեության հմտորեն կազմակերպումը կօգնի նրանց յուրացնելու առարկայական անհրաժեշտ գիտելիքներ, տիրապետելու համապիտանի ուսումնական կարողությունների և պատրաստ լինելու ստեղծագործական ակտիվ ուսումնառության:

Այս ամենը կարելի է ամփոփել մեկ կոչով **«Նպաստել անձի զարգացմանը»:**

Այս պատվերն է մեզ տալիս հասարակությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխյան, 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար: Մաս I, «Զանգակ» հրատարակչություն, 2013թ.
2. Горностаева З.Я “Проблема самостоятельной познавательной деятельности” // Открыт. школа. – 1998. – №2
3. Жарова Л.В. “Управление самостоятельной деятельностью учащихся” – Л., - 1982.
4. Нильсон О.А. “Теория и практика самостоятельной работы

учащихся” - Тал., 1976.

5. Մ.Մանուկյան-«Սովորողների ինքնուրույն գործունեության կազմակերպումը մաթեմատիկայի դասերին»
6. «Նախաշավիղ» 2014